

Ստրասբուրգի համալսարանում ներկայացնելով «Armenien unter der arabischen Herrschaft bis zur Entstehung des Bagratidenreiches—Հայերը արաբական իշխանութեան ներքոյ մինչև Բագրատունեաց հարստութեան հիմնադրութիւնը» շարադրութիւնը արժանացել է փիլիսոփայութեան դոկտորի տիտղոսի: Այդ աշխատութիւնը արդէն տպագրուել է «Հանդէս Հայագիտութեան» մասնագիտական թերթի մէջ:

Ս. Էջմիածնի Գէորգեան ձեմարանում դասերը սկսուցին Սեպտեմբերի 16-ին, իսկ Սեպտեմբերի մէկից կատարուեց հին աշակերտների վերաքննութիւնը և նորեկների ընդունելութիւնը: Ամեն տարուայ պէս ձեմարան մտնել ցանկացողների թիւը շատ մեծ էր և վարչութիւնը ի նկատի ունենալով դասարանների և ննջարանի փոքրութիւնը, ստիպուած մերժեց շատերին: Այնուամենայնիւ բոլոր աշակերտների թիւը հասնում է 240, որոնցից երթեւեկ են միայն 20 հոգի:

ձեմարանի ուսուցչական կազմի մէջ աւելացան պ. Ս. Տիգրանեան՝ մասնագիտական բաժնում իմաստասիրական առարկաների ուսուցիչ և Տ. Մամբրէ վարդ. դպրոցական բաժնի Գ. և Ե. դասարանների կրօնուսոյց:

Մասեճադարանի և Թանգարանի անունով ստացուած նուէրներ

Տ. Այս տարուայ Մայիս ամսին դործով Բագու գտնուած Ժամանակ, հանդուցեալ Աստուածատուր Վաճկաճեանի այրին ղիմեց մեզ և յայտնեց, որ մտադիր է իւր ամուսնու փոքրեկ գրադարանը, հանդուցեալի նկարի հետ նուիրել Մայր Աթոռի Մատենադարանին և երկու ամիս անց կատարեց իւր խոստումը, երկու արկղի մէջ մեզ ուղարկելով յիշեալ գրքերը: Մինչև օրս, դժբախտաբար, չենք կարողացել ցուցակագրել այդ գրքերը, ուստի

գրադարանի քովանդակութեան մասին ոչինչ ասել չենք կարող: Մեծ չնորհակալութիւն համեատափայլ տիկնոջը իւր ընծայի համար, որով նա իւր չափով նպաստեց մեր Մատենադարանի ճոխացման և յաւերժացրեց իւր ամուսնու բարի յիշատակը:

9. Մի մասնաւոր նամակով Մեծ. Կ. Եղեանը Պետերբուրգից մեզ գրում է, որ մի քանի արկղ հին լրագիր է ուղարկում մեր Մատենադարանին: Տասնևիններորդ գարում Հայոց կեանքի պատմութեան որոշ մասը ամբարուած է լրագրութեան մէջ: Վիեննայի Միխիթարեանները գրելով Հայոց լրագրութեան պատմութիւնը, միևնոյն ժամանակ փորձեցին իրենց գրադարանում ժողովել Կալիսթայում հրատարակուած «Աղգարար» հնագոյն լրագրից սկսած ըստը հայերէն թերթերը: Որքան մեզ յայտնի է, նոյա աշխատանքը պսակուել է յաջողութեամբ և Վիեննայի Միխիթարեան գրադարանի այժմ ունի հայ լրագրութեան ամենախառնալ ժողովածուն: Վերջին ժամանակներս մի շարք հանգամանքներ նպաստեցին ս. Էջմիածնի մատենադարանին և յոյս կայ որ Մատենադարանը այդ կողմից գոնէ երկրորդ տեղը բռնի: Մի քանի տարի առաջ հանգուցեալ Աւետիք Ղուկասեանի սատարութեամբ Պօլսում ազգիս Վեհափառ Հայրապետը գնել տուեց Յովհաննէս աւագ քահանայ Մկրեանի ընտիր ժողովածուն. ապա, ինչպէս ժամանակին հաղորդել ենք, Աղէքսանդր Երեցեանի գրադարանում բաւական շատ են հին լրագիրների ժողովածուները և ի վերջոյ դոցա հետ միացնելով մեր Մատենադարանի եղած օրինակները և Մեծ. Կ. Եղեանի ժողովածուն, կստանանք այնպիսի մի ամբողջութիւն, որ լրացնելը այնքան էլ դժուար չի լինել:

10. Մատենադարանին կից է վանքի նոր թանգարանը, որի մէջ կան պատմական հնութիւններ, յիշատակալից արժանի իրեր և նկարներ: Վերջիններս թէև թուով բաւական շատ են, բայց ընդհանրապէս խեղճ տպաւորութիւն են թողնում, որովհետև ըստ մեծի մասին կամ հասարակ ընդօրինակութիւններ են կամ հայ միջակ նկարիչները գործեր: Յայտնի նկարիչներից ունինք Ա. յովազովսկու երկու նկարը՝ որոնցից մէկը ներկայացնում է ս. Աթանի լեռուը շրջապատուած մրկայոյզ ծովով, միւսը խիստ մեծ դերբով — աշխարհի ստեղծագործութիւնն է: Գ. Բաշինջաղեանից ունինք մի փոքր նկար — Անիի աւերակները լուսնի լոյսով: Յիշատակութեան արժանի են Ամստերդամի Հայոց եկեղեցուց Յիշատակութեան արժանի են Ամստերդամի Հայոց եկեղեցուց Գէորգ կաթողիկոսի օրով բերուած մի քանի նկարներ. երեք Գէորգ կաթողիկոսի օրով բերուած մի քանի նկարներ. երեք անյայտ հայերի պատկերները, Ռաֆայէլի Առտուծածինը (Madonna de la Sedia) նուրբ ասեղնագործած և մի անյայտ նկարչի գործ, որ ներկայացնում է Աւետարանից «տուք զկայսերն կայսեր և

զԱստուծոյն Աստուծոյ», բաւական տարբեր Տիցեանի համանման նկարից, որի ընդօրինակութիւնը թանգարանի համար բաւական յաջող նկարել է Արշակ Յետվաճեանը: Լրութեան համար յիշենք նաև մի հատ մեծ վարագոյր գորլէն — ասեղնադորճ, որ Գարեգին վարտապետ Յովսէփեանը Նոր-Բայազէտի մի հայ գիւղական եկեղեցում գտնելով, հետն առել բերել էր թագարան:

Յատուկ ուրախութեամբ յիշատակում ենք այն հանգամանքը, որ ամենավերջին օրերս թանգարանը ճոխացաւ երեք յաջող ընդօրինակութիւններով, որ պատրաստել և նուիրել է երիտասարդ նկարիչ պ. Փ. Թեւլէմէզեանը: Նա դեռ Պարիզից ուղարկել էր Ս. Մատթէոս Աւետարանչի ընդօրինակութիւնը, առնուած Ռեմբրանդի նկարից, ապա ս. Աստուածածնինը Ֆրանսիացի Միկեարդի (Miquerd) նկարից և Պարիզի Լուվր թանգարանում գտնուած Տրդատ թագաւորի մարմարիայ արձանի ընդօրինակութիւնը: Այդ արձանը, որ տեղաւորուած է Լուվրի առաջին յարկում, արևելեան արուեստին վերապահուած սրահներից մէկում, ներկայացնում է Հայոց թագաւորին արևելեան յատուկ տարազով — գլխին ֆուլգական գլխարկ, կարճ վերնազգեստ՝ մէջքում՝ դոտաւորուած և նեղ վարդիկ հագած: Թագաւորը հանդարտ կանգնած է աջ ձեռնի գաւազան, իսկ ձախով բռնել է վերնազգեստը: Նկարիչը բացի արձանից, նրա յետին ֆոնի վրայ նկարել է մի ուրիշ արձան — Միհր աստուածը չոգած մի եղան մէջքին, դանակը խրում է նրա կրկնորդը:

Մեսրոպ վարդապետ.



ՏԱՃԿԱԶԱՅԹ *

— Կաթուղիկոսական ընտրութիւն մ' ալ: — Կիլիկիոյ կաթուղիկոսական ընտրութենէն ետքը՝ անհրաժեշտ հարկ եղած է՝ առանց այլ ևս յապաղման ձեռնարկել Աղթամաւայ կաթուղի-

*) Կ. Պօլսի քերթերից: